

ԱԿՆԱՐԿՆԵՐԸ, ՄԵԶԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՌԵՄԻՆԻՍԿԵՆՑԻԱՆԵՐԸ
ՈՐՊԵՍ ՄԻԶՏԵՔՍԱՅՆՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐ
(ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Բանալի բառեր և արտահայտություններ. միջտեքստայնություն, ռեմինիսցենցիա, ակնարկ, մեջբերություն, պոեզիա, սիմուլյակր, տեքստ, պրոտոտեքստ, սկզբնաղբյուր, թաքնված մեջբերում:

Ключевые слова и выражения: интертекстуальность, реминисценция, аллюзия, цитата, поэзия, симулякр, текст, прототекст, первоисточник, скрытая цитата.

Key words and expressions: intertextuality, reminiscence, allusion, quote, poetry, simulacrum, text, prototext, primary source, hidden quote.

Նախաբան

Երկու կամ ավելի տեքստեր բովանդակային մակարդակում կարող են ուղղակիորեն կամ անուղղակիորեն միջտեքստային, փոխհարաբերակցված, երկխոսական կապ ձևավորել՝ յուրօրինակ իմաստով ու նոր բովանդակությամբ օժտելով նոր ստեղծված տեքստը: Գեղարվեստական ստեղծագործության մեջ ամենաարդիական երևույթներից մեկը՝ միջտեքստային կապերի ու ներտեքստային փոխհարաբերակցության ֆենոմենը՝ որպես մի քանի տեքստերի փոխհարաբերակցված ձև, տարբեր հեղինակների կողմից տարբեր ձևակերպումներ է ստացել: Նախատեքստը, օրինակ, կարող է ամենապարզ իմաստով կոչվել «մայր տեքստ», ինչպես նաև՝ «նախորդող» (կամ «անտեցեդենտ») տեքստ», «պրոտոտեքստ», «պրետեքստ», «նախադեպային (պրեցեդենտ (լատ. praecedens (praecedentis) «նախընթաց») տեքստ»¹: Հարկ է նկատել, որ միջտեքստայնության

¹ Բառարանում «պրեցեդենտ» եզրույթը ձևակերպվում է որպես իրադարձություն, որը «ծառայում է որպես օրինակ կամ հիմնավորում՝ հաջորդիվ տեղի ունեցող նույնաբնույթ իրադարձության համար»: Պրեցեդենտի ստեղծմանը հետևում են հետագայում նույնպիսի դեպքերի կրկնությունները: Յուրաքանչյուր իրողություն ապագայում տեղի ունեցածի համընկումն է (Ожегов С. И., Шведова Н. Ю. Толковый словарь русского языка: 80 000 слов и фразеологических выражений. 4-е изд., доп. М., 2 004, с. 586): Իսկ առավել նեղ իմաստով՝ պրեցեդենտ տեքստերը համաշխարհային

տեսությանն առավել սերտորեն է առնչվում և լայնորեն կիրառվում հենց վերջինս՝ «նախադեպային տեքստ» ձևակերպումը, քանի որ այն նախնառաջ ենթադրում է նախատեքստի և նոր տեքստի փոխհարաբերակցություն՝ պահված ընթերցողի հիշողության խորքային շերտերում: Ընթերցողի՝ գրական նախադեպային երևույթներն ընկալելու առանձնահատկությունն իր հերթին մշակութային իրողություններն ազգային տեսանկյունից որոշակիացված այլատեսակ ընկալման մեջ է: Նոր տեքստը սահմանվում է որպես «ընդունող (ռեցիպիենտ) տեքստ», իսկ պրեցեդենտ տեքստի տարրերը, ներհոսելով «ընդունող (ռեցիպիենտ) տեքստային» տարածություն, սահմանվում են որպես միջատեքստեր, որոնք, ըստ էության, կարող են լինել տարբեր ծավալի՝ մեկ բառից մինչև ընդհանուր ամբողջական տեքստ:

Միջտեքստայնության տիպաբանության դասակարգումներում տարբեր հետազոտողներ դասակարգման տարբեր առանձնահատկություններ են առաջ քաշում: Ժ. Ժանետը, օրինակ, «Պալիմպեստներ. գրականությունը երկրորդ աստիճանում» գրքում առանձնացնում է տեքստի փոխհարաբերակցության 5 տեսակ՝

1 միջտեքստայնությունը՝ որպես երկու և ավելի տեքստերի համատեղում մեկ տեքստում (մեջբերություն, ակնարկ, տեքստայուրացում և այլն),

2 պարատեքստայնությունը՝ որպես տեքստի կապն իր վերնագրի, վերջաբանի, բնաբանի հետ և այլն,

3 մետատեքստայնությունը՝ որպես մեկնաբանող և հաճախ որպես սեփական պրետեքստի քննադատական վկայակոչում,

4 հիպերտեքստայնությունը՝ որպես մի տեքստից մյուսին երգիծում և ծաղրանմանեցում,

5 արքետեքստայնությունն ընկալվում է որպես տեքստերի ժանրային կապ²:

Միջտեքստայնության այս հիմնական և էական դասակարգումներից գատ Ժ. Ժանետը հետագայում բազմաթիվ այլ դասակարգումներով

մշակութային ժառանգությանը պատկանող տեքստերն են, ավելի կոնկրետ՝ սրբազան տեքստերը:

Գիտական գրականության մեջ եզրույթն առաջին անգամ գործածվել է Յու. Ն. Կարաուլովի կողմից: (Առավել մանրամասն տե՛ս **Караулов Ю. Н.** Русский язык и языковая личность. М.: Изд. «Наука» 1987, 2 16 с.):

² Տե՛ս **Genette G.** Palimpsestes: La littérature au second degré. Paris. 1982, էջ 76.

ընդլայնում է այդ հիմնադրությունների համակարգն ու հարստացնում նոր ենթատեսակներով՝ դիտարկելով դրանց փոխհարաբերակցությունները:

Մեկ այլ հետազոտող՝ Ն. Ա. Ֆատեևան, հիմքում ունենալով Ժ. Ժանետի վերոնշյալ դասակարգումը, հավելում է ակնարկների ու քաղվածք-մեջբերումների ամբողջությունն ենթադրող «ցենտոնային տեքստեր» և «միջատեքստ-վերապատում» հասկացությունները, հարերգություններն (պարողիա) ու լեզվական խաղը³:

Ակնարկներն ու մեջբերությունները որպես միջտեքստայնության իմաստաբանական դաշտի առանցքային բաղադրիչներ

Այսպիսով, միջտեքստային կապերը, ձևավորելով «տեքստ տեքստի մեջ» հյուսվածքը, ներառում են նաև մեջբերություններ ու ակնարկներ⁴: «Ակնարկ» (*այրուզիա*) հասկացությունը՝ որպես գեղարվեստական հնարանք, ընկալվում է իբրև տեքստի մեջ (սովորաբար գեղարվեստական ստեղծագործության մեջ) մեկ այլ՝ պրեցեդենտ տեքստի տարրերի առկայություն, որը թույլ է տալիս սկզբնաղբյուր հանդիսացող տեքստային իրականության մեջ իմաստավորվածը ընդունող՝ «ռեցիպիենտ» տեքստում օժտել նոր հարիմաստներով (կոննոտատիվ իմաստներով):

Իմաստաբանական ու կառուցվածքային առումով մեջբերությունները կարող են դրսևորվել ինչպես ամբողջական նախադասություններով, այնպես էլ բառակապակցություններով, նույնիսկ՝ ամենասովորական բառերով, աֆորիզմներով, ակնարկ-մետաֆորներով և այլն: Գեղարվեստական տեքստում մեջբերումներն ու ակնարկները, չնայած մեծ մասամբ գործածվում են փոխակերպված ձևով, երբեմն կարող են առանձնանալ նաև չակերտներով՝ պահպանելով իրենց սկզբնաղբյուրային նշանակությունն ու վիճակը՝ երբեմն էլ անմիջական հղում կատարելով մեջբերված քաղվածքի հեղինակին, ինչպես, օրինակ, Հ. Էդոյանի «Անտառում» բանաստեղծության մեջ է.

*Բուրդան ասում էր-«հիշիր անցյալդ»,
բայց դու ապագայի ափերն ես երագում:
Հիսուսն ասում էր-«նայիր ապագային»,*

³ Ст' у **Фатеева Н. А.** Интертекст в мире текстов: Контрапункт интертекстуальности. М.: Изд. «КомКнига», 2 007, էջ 12 2 -148:

⁴ Գեղարվեստական տեքստում «հեղինակը որևէ միտք կամ իրողություն մանրամասն նկարագրելու փոխարեն այն ներկայացնում է շատ սեղմ, բայց բազմիմաստ մի արտահայտությամբ, որի հետ տրամաբանորեն կամ զուգորդաբար կապվում է այն, ինչ խոսողը ցանկանում է հաղորդել», - գրում է Լ. Եզեկյանը (**Եզեկյան Լ.**, Հայոց լեզվի ոճագիտություն (ուսումնական ձեռնարկ), Երևանի համալս. հրատ.: Եր., 2 003, էջ 353:

*բայց դու հայացքդ ուղղել ես անցյալին:
Պլատոնն ասում էր-«Բարձրացրու վարագույրը»,
բայց դու գերադասում ես ներկայացումը:
Շեքսպիրն ասում էր-«մնացածը լռություն»,
բայց դու այն մյուս լռությունն ես խոսում:
Դանտեն ասում էր-«կյանքի կես շրջանում»,
բայց դու ոտով-գլխով կորել ես անտառում»:*

Այստեղ հեղինակը հետևելով այլ հեղինակների մտքերի մետախմաստավորման կցակերտվածքային սկզբունքին, միաժամանակ ձևավորում-իմաստավորում է սեփական գեղարվեստական միտքը:

Իսկ «Ինչպես ասում են» բանաստեղծության տվյալ հատվածում որպես միջատեքստ գործաված մեջբերումն առանձնացված է չակերտներով՝ առանց հիշատակելու մեջբերված քաղվածքի սկզբնաղբյուրն ու հեղինակին: Այս պարագայում ընթերցողը հեշտորեն կարող է փակագծերը բացելով «ճանաչել» Ջոզեֆ Քոնրադի հեղինակային միտքը՝ «Տվեք ինձ ճիշտ խոսք և ինտոնացիա և ես կշրջեմ աշխարհը»⁶: Վերջինս էլ իր հերթին սեփական միտքը կառուցել է՝ վերաիմաստավորել-փոխակերպելով արքիմեդյան հայտնի ասույթը՝ «Տվեք ինձ հենման կետ և ես կշրջեմ աշխարհը»:

*...Բանաստեղծն ասում էր –
«Տվեք ինձ մի բառ
և ես աշխարհը
շուր կտամ ոտքից գլուխ»:*

*Սոսկ մի բառ՝ թաքնված
բոլոր բառերի մեջ:*

(«Ինչպես ասում են»)⁷

Այսպիսով, մեջբերված քաղվածքը, սերտորեն կապվելով ընդունող տեքստին, մի կողմից ի հայտ է բերում բանաստեղծական ողջ կառույցի խորքային շերտերում ամփոփված իմաստները, մյուս կողմից՝ տեղայնական կամ հատվածային (ֆրագմենտային) նշանակությամբ է դրսևորվում՝ ձևավորելով տեքստային տվյալ մասի բովանդակությունը

⁵ **Էդոյան Հ.** Ընտրանի: Եր., «Հայագիտակ», հրատ., 2 016, էջ 690:

⁶ **Конрад Д.** Личное дело (сборник). М.: Изд. «Ад Маргинем Пресс», 2 019 (մուտք՝ 16.02 .2 02 2)

<http://maxima-library.org/component/maxlib/b/456075?format=read>,

⁷ **Էդոյան Հ.**, Ընտրանի, 2 016, էջ 62 1:

(նկատի ունենալով այն հանգամանքը, որ բանաստեղծությունը հնգամաս կառուցվածք ունի. մեր կողմից մեջբերված բանաստեղծական հատվածը բանաստեղծության 5-րդ մասն է... բանաստեղծության յուրաքանչյուր հատված իմատավորվում է տարբեր սկզբնաղբյուրներից քաղված մեջբերումներով, որոնք, միահյուսվելով մեկը մյուսին, շարունակելով-լրացնելով միմյանց, ձևավորում են բազմակողմ բարդ բանաստեղծական ամբողջական կառույց): Բանաստեղծական տեքստը դառնում է յուրահատուկ տարածություն, որը ներառում է տարաբնույթ մշակութային կոդերի, պատմական տարբեր դարաշրջանների խորքային շերտերի բեկորների համակցման դաշտ:

Վերոնշյալ երևույթը դիտարկվել է Վ. Պ. Մոսկվինի կողմից, և հենց նրա կողմից առաջ է քաշվել «մեջբերություն» և «ապլիկացիա» հասկացությունները տարբերակելու անհրաժեշտությունը: Ըստ նրա՝ «Ապլիկացիան (լատ. application–«միացում») դարձվածքներն են, առածները, ասացվածքները, հանրահայտ տեքստի հատվածներ (օրինակ՝ բառակապակցությունները, կայուն կապակցությունները, բանաստեղծական տողերը)՝ առանց նշելու սկզբնաղբյուրը»⁸:

Ի տարբերություն մեջբերությունների, որոնք հիմնականում պահպանում են նախատեքստի քերականական ու բառական ձևերը (չնայած երբեմն դրսևորվում է կազմափոխված, ընդլայն կերպով), ակնարկը գուգորդական հղում է սկզբնաղբյուրային տեքստին կամ նույնիսկ արտատեքստային իրողություններին (որևէ պատմական, մշակութային եղելության և այլն): Այն նախատեքստի հատվածական, ոչ կոնկրետ վերակերպում-վերաիմաստավորումն է նոր ստեղծված տեքստում՝ առանց սկզբնաղբյուրային տեքստի այս կամ այն տարրերի կոնկրետ հիշատակման, քերականական ու բառական ձևերի պահպանման: Ասվածի լավագույն վկայությունն է Հ. Էդյանի «Եվ ես վերջ չունեմ» բանաստեղծությունը, որը բովանդակային-հայեցակարգային դաշտում քնարախոհական ընդհանուր թեքումներով, ինքնաբուխ դրսևորումներով, փոխաբերական առնչություններով ակամայից գուգորդվում է Դանթեի «Աստվածային կատակերգությանը»: Երկու տեքստերի տարբերակվող տրամադրությունների առանցքը գերմարդկային տարողությամբ դեպի

⁸ **Москвин В. П.** Выразительные средства современной русской речи: тропы и фигуры. Терминологический словарь-справочник. М.: Едиториал УРСС, 2 004, էջ 42 : St u նաև՝ **Москвин В. П.** Цитирование, аппликация, парافраз: К разграничению понятий // Филологические науки. 2 002 . № 1. С. 63—70.

վերերկրային սիրո ու կյանքի տեսիլներով շղարշված աշխարհ մղվելու տրամադրություններն են.

*Իմ քայլերն ընդհատվում են քո դռան առաջ,
որից այն կողմ չգիտեմ՝ ով է բնակվում:
Իմ ստվերն ընկնում է և անհետանում
քո ստվերի մեջ:
Իմ ժամանակը հոսում է դեպի քեզ,
քո մեջ անհետանում:
Իմ ունեցածը հենց այն է, ինչ դու
վերցնում ես ինձանից:
Եվ ես վերջ չունեմ:
Եվ չունեմ սկիզբ
քո փերի մեջ⁹:*

Որպես մեջբերվող սկզբնաղբյուրային հենք առավել գործածական են սրբազան (բիբլիական) տեքստերը, որոնք ժամանակի ընթացքում քրիստոնեական մշակույթում դարձել են արքետիպեր, միֆաբանական տեքստերը, ժողովրդական բանահյուսությունը, թևավոր խոսքերը, ինչպես նաև դասական գրականության լավագույն օրինակները:

Բիբլիական ակնարկներին է վերաբերում բիբլիական տեքստերին առնչվող ամեն ինչ՝ սկսած աստվածաշնչյան սրբազան հատուկ անուններից մինչև աստվածաշնչյան պյուժեներ, մոտիվներ և այլն:

Հետաքրքրական է նաև հատուկ անունների գործածումը, առավելապես այն անունների, որոնք ունեն հնագույն գրական ու մշակութային ավանդույթ: Վերջիններս, վերամարմնավորվելով ստեղծագործական տեքստում, յուրահատուկ համադրումներով ձևավորում են ակնարկային շղթայակապ հյուսվածք: Այս առումով տեղին է հիշատակել Հ. Էդոյանի «Աստվածների ժամանակը» և «Երկրային ժամանակ» բանաստեղծությունները.

*....Եվ պոետների ժամն է սկսվում-
թեև Ապոլլոնը
չի սիրում նոր երգեր,
նա միշտ նախընտրում է
հին պոետներին...
...մի գիրք է թերթում
և նայում քմծիծաղով
նոր պոետներին....*

⁹ Էդոյան Հ., Կանգ առ, ես այստեղ եմ: Եր., «Վան Արյան» հրատ., 2 012 , էջ 2 2 :

(«Աստվածների ժամանակը»)¹⁰:

*Ես ելնում եմ Անդունդից ինչպես Ողիսևս,
ինչպես Էնկիդու կամ Արա Գեղեցիկ,
որ պատմում էր իր տեսած աշխարհների մասին:
Ես ելնում եմ Անդունդից-իմ կյանքի նախկին
հետքերը թողած նրա խավարի մեջ....
(«Երկրային ժամանակ»)¹¹:*

Բանաստեղծությունների մեջ գործածված միֆական անունները «քնարական «ես»-ի նշանաբանական (սեմիոլոգիական) երկվորյակն են: Նրանք բանաստեղծական տեքստում կարևորագույն իմաստաստեղծ գործառույթ են իրականացնում՝ ընդգծելով քնարական «ես»-ի երկբնույթ էությունն ու երկարժեքությունը՝ երկու «իրարամերժ» իրականությունների փոխհետադարձ կապը: <...> Բանաստեղծություններում գործածված միֆական կերպարների հիմնական գործառույթը պայմանավորված է քնարական «ես»-ին բնորոշող էությամբ, որը միաժամանակ կարող է իր մեջ «տեղավորել» մեկ կամ մի քանի խորհրդանշական կերպարներ, որոնք կարող են միաձուլվել մեկ ամբողջի մեջ»¹²:

Գեղարվեստական տեքստում բազմաբնույթ վերագրումներով ու փոխակերպումներով, նմանակային փոխադրությամբ գործածված այս կամ այն ակնարկներն ու մեջբերումները դառնում են կառուցվածքային որոշիչ տարրեր՝ այսկերպ տեքստը դարձնելով որակապես միմյանցից հեռու տրամադրություններն իրար շաղկապող «դաշտ»: Երկու տեքստերի փոխհարաբերակցության, մեկը մյուսով լիցքավորելու արդյունքում մեջբերումը կարող է ձեռք բերել հատուկ նշանակություն, ստանալ խորհրդանշական հնչեղություն՝ ձևավորելով կառուցվածքային ու արտահայտչական երկաստիճան յուրահատուկ համակարգ: Այսօրինակ եղանակով կարող է նաև ձևավորվել քնարական հերոսների հոգեբանության երկաստիճան զարգացում՝ մի հերոսից մյուսի փոխադրությամբ, որը մղում է մտորել-դիտարկելու տարբեր հեղինակների ստեղծագործություններում միջտեքստային փոխհարաբերակցություն ձևավորած մեջբերումների էական տարրերի շուրջ: Վերոնշյալ երևույթի յուրահատկությունը մասնավորապես քնարական հերոսի կամ քնարական

¹⁰ **Էդոյան Հ.**, Երկրային ժամանակ: Եր., «Սովետական գրող» հրատ., 1983, էջ 10-12 :

¹¹ **Էդոյան Հ.**, Կյանքը, իմ ուղին: Եր., «Հայագիտակ» հրատ., 1999, էջ 106:

¹² **Զաքարյան Հ.**, Ավանդույթի և նորարարության խնդիրները Հենրիկ Էդոյանի պոեզիայում: Բ. գ. թ. համար ատենախոսություն: Եր.-2 02 2 , էջ 12 7:

«ես»-ի ներքին աշխարհի մտորումներում է (ներքին մենախոսության մեջ), քանի որ նրա յուրաքանչյուր ապրում, յուրաքանչյուր մտորում, ըստ էության, ներքնապես երկխոսական բնույթ է կրում: Ինքնագիտակցությունը դրսևորվում է մեկ այլ գիտակցության պատկերում, ասել է թե՛ քնարական հերոսը մշտապես երկխոսում է, մի կողմից, ինքն իր հետ, մի կողմից՝ «ուրիշի», մյուս կողմից՝ ընթերցողի, այդ թվում՝ նաև հեղինակի հետ: Ընդ որում՝ ստեղծագործության արարման գործընթացում հեղինակ-քնարական հերոս երկխոսական դաշտում հեղինակը ոչ թե խոսում է հերոսի մասին, այլ՝ հերոսի հետ, որը հաստատում է քնարական հերոսի («ես»-ի) ինքնագիտակցության անկախությունն ու անկրկնելիությունը, ինչպես նաև քնարական գիտակցության «պոլիֆոնիկ» բնույթը՝ որպես այս կամ այն ժամանակաշրջանի հոգևոր էության բազմաբնույթ յուրահատկություններն արտացոլող երևույթ:

Սկզբնաղբյուրային բովանդակությունը, վերջինիս հենքի վրա կառուցված գրական-գեղարվեստական ստեղծագործությանը և՛ գաղափարական, և՛ գեղարվեստական տեսանկյունից հարստացնելու հետ մեկտեղ, շեշտում է նաև սեփական կշռելիությունը՝ ուրվագծելով առանձին գաղափարներ, որակներ, պատկերներ, խտացնելով տեքստում տիրապետող իմաստները, իմաստավորում է զուգորդական գծերը՝ կերպափոխված ակնարկային տարրերը փոխակերպելով իրենց մեջ տարաբնույթ նշանակություններ կրող խորհրդանիշների: Այսպես ակնարկային տարրերը, որոնք կարող են դրսևորվել նաև բառերի միջոցով, միտված են օժտվելու նոր իմաստով ու նոր նշանակությամբ: Նախատեքստի բովանդակային փոխակերպումը կարող է տարբեր կերպ դրսևորվել: Այս կամ այն համատեքստում սկզբնաղբյուրին հղումը կարող է ի հայտ բերել նոր հնչեղություն՝ պայմանավորված կոնկրետ ակնարկային իրողությամբ:

Վերոբերյալ բանաստեղծական օրինակները («Անտառում», «Ինչպես ասում են») թույլ են տալիս նաև ենթադրել, որ քնարական «ես»-ը, «օգտվելով» հանրահայտ դեմքի կողմից ստեղծված-գործածված մեջբերություններից, իրեն «ղիմակավորելով» այդ մեջբերումով, նմանակվող-աննմանակ բազմախորհուրդ, բազմաձև տարբերակներով փորձում է առավել շեշտված ու պարզ կերպով վերարտադրել գեղարվեստական ասելիքը:

Այսպիսով, տեքստում մեջբերման գործառնությունը պայմանավորված՝ առանձնացվում են հետևյալ տարատեսակները՝ մեջբերություն-երկխոսություններ, մեջբերություն-տեղեկություններ, մեջբերություն-մեկնություններ, մեջբերություն-գնահատություններ, մեջբերություն-դոմինանտներ, մեջբերություն-խորհրդանշաններ, մեջբերություն-իրողություններ և քվադրմեջբերություն՝ տեքստում մեկ այլ տեքստի փոխակերպված

ներկայություն: Վերջինս, դրսևորվելով տեքստում, տարաբնույթ գործառույթ է իրականացնում և կարող է դառնալ հեղինակային խորքային մտահղացումների ու գաղափարների դրսևորման միջոց:

Դրսևորվելով որպես պրեցեդենտ տեքստեր՝ մեջբերման նշյալ տարատեսակներն իրենց գործառույթային բնույթով ու նշանակությամբ, գուգավորումներով ու փոխանցումներով կարող են մեկը մյուսով «լիցքավորվել», փոխհարաբերակցել¹³: Նրանց կարելի է դիտարկել նաև որպես տեքստային կառուցվածքի գործաբանական (պրագմատիկ) տարրեր, իմաստաբանական իրողություններ կամ էլ նշանաբանական (սեմիոլոգիական) երևույթներ, որոնք տեքստային տվյալ հատվածում կամ ամբողջական տեքստում եզրակցում են նաև հարակից տեքստային տարածության այս կամ այն իրավիճակները՝ ձևավորելով իմաստներ:

Համաձայն Ն. Ա. Ֆատենայի՝ մեջբերությունների տարբերությունն ակնարկից այն է, որ մեջբերվող տեքստի «տարրերի փոխառությունները տեղի են ունենում մասնակիորեն, իսկ պրեցեդենտ տեքստի ամբողջական դրսևորումը կամ տողը, փոխկապակցվելով նոր տեքստին, ներկա է լինում նրա մեջ կարծես տեքստի հետևում: <...> Մեջբերման դեպքում հեղինակը մեծ մասամբ պարզաբանում (էքսպլիկացնում) է վերակառուցողական միջտեքստայնությունը՝ արձանագրելով «սեփական» և «ուրիշի» տեքստերի ընդհանրությունը», իսկ ակնարկի դեպքում առաջին տեղում կառուցողական միջտեքստայնությունն է, որի նպատակն է միավորել փոխկապակցված տեքստերն այնպես, որ դրանք տեքստի սեմանտիկական-կոմպոզիցիոն կառուցվածքի շղթայակցող հանգույցների վերածվեն»¹⁴:

Հարկ է հիշատակել, որ միջտեքստայնություն ֆենոմենը պոստմոդեռնիստական գրականության հիմնական որակն ու անքակտելի մասն է: Եթե մինչ այդ ընդունող տեքստում միջատեքստը դրսևորվում-իմաստավորվում էր համաձուլված եղանակով, ապա պոստմոդեռնիստական գրականության մեջ հակառակ երևույթն է դիտարկվում:

Ռեմինիսցենցիաների առանձնահատկություններն ու տեսակները. դրանց գործառույթները տեքստի կառուցվածքում

¹³ Сорокин Ю. А., Михалева Ю. И. Прецедентный текст как способ фиксации языкового сознания // Язык и сознание: парадоксальная рациональность. М., 1993, с. 105.

¹⁴ Фатеева Н. А. Типология интертекстуальных элементов и связей в художественной речи // Известия Академии наук СССР. Серия литературы и языка. М.: Изд. «Наука», 1998. Т. 57, с. 2 9:

Ժամանակակից գրականության մեջ նկատելի են նաև թաքնված մեջբերումների գործածման արդիական դրսևորումներ: Այդտեսակ մեջբերումներն ընդունված է անվանել ռեմինիսցենցիաներ (լատ. *reminiscor* – «մտաբերում եմ») (եզրույթն առաջին անգամ գործածել է 1907թ.¹⁵ սերբ գիտնական Վ. Ուրբանչիչը): Մեջբերումների այդօրինակ գործածման առանձնահատկությունը պայմանավորված է նրանով, որ «մայր տեքստը», մեջբերվել-ներմուծվելով նոր տեքստային տարածություն, առանց չակերտների գործածության, առանց հեղինակի հիշատակման, յուրահատուկ համադրումներով, նոր տեքստի հետ յուրահատուկ մերձեցումներով ու ձուլվածքներով լիցքավորվում է իմաստաբանական նոր նշանակությամբ: Տեքստային կառույցում ռեմինիսցենցիաները դրսևորվում են մասնավորապես մոտիվային, սյուժետային, պատկերային մակարդակներում, այնպես, որ ընթերցողը տեքստում հեշտորեն կարող է ճանաչել իրեն արդեն հայտնի սյուժեն, գեղարվեստական մոտիվն ու պատկերը. «Տեքստային ռեմինիսցենցիաները կարող են իրենցից ներկայացնել մեջբերումներ (ամբողջական ֆրագմենտներից մինչև առանձին բառակապակցություններ), «թևավոր խոսքեր», որոշակի կերպով երանգավորված առանձին բառեր, ներառյալ անհատական նորաբանություններ, գործող անձանց (պերսոնաժի-Չ. Զ.) անուններ, ստեղծագործության վերնագրեր, նրանց հեղինակների անունները, բառերի յուրահատուկ նշանակումներն (կոննոտացիաներն) ու դրսևորումները, իրադարձությունների մասին ուղղակի կամ անուղղակի հիշատակումներ»¹⁵: Մեջբերված քաղվածքը, մի կողմից, մղվում է դեպի նոր տարածություն, մերձենում-միաձուլվում վերջինիս հետ, մյուս կողմից՝ ինչ-որ մի մակարդակում նաև տրոհվում նրանից՝ թույլ տալով, որ նա իր լույսի արտացոլանքով լուսավորի իր ներփակ տարածության խորքային միտումները:

Երբեմն հեղինակը կարող է հեղինակային տեքստում գործածված պրեցեդենտ տեքստին միտումնավոր ուղղակի հղումներ չկիրառել՝ տեքստն ընկալելու մենաշնորհը թողնելով ընթերցողին, որ ինքը զուգորդական կապ կհայտնաբերի ներմուծվող տեքստի և տեքստ ընդունողի միջև: Օրինակ՝ Չ. Էդոյանի «Երեխաները արթուն քաղաքում» բանաստեղծությունը կարդալով՝ դժվար չէ չնկատել զուգորդական առնչություն հերակլիտյան հանրահայտ

¹⁵ Супрун А. Е. Текстовые реминисценции как языковое явление // Вопросы языкознания. М., 1995. – №6, с. 17.

մտքին. «Արթուրների համար գոյություն ունի մեկ ընդհանուր աշխարհ, իսկ քնածներից յուրաքանչյուրը շրջվում է դեպի սեփականը»¹⁶:

Թաքնված մեջքերումների առկայությունը տեքստում երբեմն պայմանավորված է անգիտակցական կամ չգիտակցված կիրառությամբ¹⁷:

Այսպիսով, «Համառոտ գրական հանրագիտարանում» «ռեմինիսցենցիա» եզրույթը հետևյալ կերպ է բնորոշվում. «Ռեմինիսցենցիան անուղղակի մեջքերում է, մեջքերում՝ առանց չակերտների: Իր բնույթով ռեմինիսցենցիան միշտ ածանցյալ է կամ երկրորդական. դա մտավոր հղում է, համեմատություն ինչ-որ երևույթի հետ, գիտակցված կամ անգիտակցական համեմատություն, հետադարձ հայացք: Այնուամենայնիվ, մեթոդն ինքնին միշտ կրում է ինտելեկտուալ և ստեղծագործական բնույթ, դրանով այն տարբերվում է սովորական պատճենումից, բանաբաղությունից, առավել ևս՝ գրայուրացումից (պլագիատից): Հենց այդ պատճառով անհրաժեշտ է ռեմինիսցենցիան ու մեջքերումները տարբերակել»¹⁸: Մի շարք հետազոտողներ (Ե. Ն. Ջոլոտուխինա, Ս. Ա. Կազանա, Ա. Պ. Կվյատկովսկի, Ա. Ե. Սուպուրին, Ա. Կ. Ժոլկովսկի¹⁹) հակված են ընդունելու տեքստային ռեմինիսցենցիայի գործածման անգիտակցական միտումը: Հեղինակը, անգիտակցական

¹⁶ Фрагменты ранних греческих философов. Ч. 1. От этических теокосмогоний до возникновения атомистики. М.: Изд. «Наука» 1989, с. 198.

¹⁷ Այս տեսակետն են առաջ քաշում Ս. Ա. Կազանան, Ե. Ն. Ջոլոտուխինան, Ա. Պ. Կվյատկովսկին: Առավել մանրամասն տե՛ս նշյալ հեղինակների համապատասխան աշխատություններում՝ **Казаева С. А.** Особенности реализации категории интертекстуальности в современных английских научных и газетных текстах: дис. к. филол. н. 10.02.04. СПб.-2 003, **Золотухина Е. Н.** Категория интертекстуальности в современном русском языке: автореф. дис. к. филол. н.: 10.02.01. Киров, 2 009, **Квятковский А. П.** Поэтический словарь / науч. ред. и сост. И. Б. Роднянская. 3-е изд., испр. и доп. М.: Изд. центр Рос. гос. гуманитар. ун-та, 2 013:

¹⁸ **Краткая литературная энциклопедия** / под ред. А. А. Суркова: в 9 т. М.: Советская энциклопедия, 1971. Т. 6. 1040 с..

¹⁹ **Золотухина Е. Н.** Категория интертекстуальности в современном русском языке: автореф. дис. к. филол. н.: 10.02.01. Киров, 2 009. **Казаева С. А.** Особенности реализации категории интертекстуальности в современных английских научных и газетных текстах: дис. к. филол. н.: 10.02.04. СПб., 2 003. **Квятковский А. П.** Поэтический словарь / науч. ред. и сост. И. Б. Роднянская. 3-е изд., испр. и доп. М.: Изд. центр Рос. гос. гуманитар. ун-та, 2 013. **Супрун А. Е.** Текстовые реминисценции как языковое явление // Вопросы языкознания. 1995, № 6, с. 17-2 9. **Жолковский А. К.** Блуждающие сны и другие работы. М.: Наука. Изд. «Восточная литература», 1994, 42 8 с..

մակարդակում ակամա դիմելով ռեմինիսցենցիայի մեթոդին, տեքստային կառույց է ներմուծում տեքստային և ոչ տեքստային իրականությունից տարրեր: Հարկ է նշել նաև, որ վերջինիս գործածման անգիտակցական ու գիտակցական միտումները նույնիսկ նշյալ հեղինակների աշխատություններում հստակորեն, համոզիչ հիմնավորումներով տարբերակված չեն:

Գրականագիտական բառարանում տարբերակվում է ռեմինիսցենցիայի երկու տեսակ՝ «էքսպլիցիտային (բացահայտ)՝ նախատեսված ճանաչողության համար, և իմպլիցիտային, թաքնված <...>: Վերջիններս տեքստում հեղինակի կողմից կարող են գործածվել չգիտակցված ձևով (ընդգծումը մերն է-Հ. Ջ.)»²⁰: Միջտեքստային փոխհարաբերակցության հետազոտման խնդրում այսօրինակ մոտեցումը թույլ է տալիս առավել խորքային պատկերացում կազմել միջտեքստայնության ֆենոմենի առանձնահատկություններն ի հայտ բերելու խնդրում: Իմպլիցիտային (ոչ բացահայտ) միջոցները կարևորագույն գործառույթ են իրականացնում միջտեքստայնության մոտեցումներով տեքստում առանցքային նշանակություն ունեցող այս կամ այն մտքի ձևավորման ու դրանց դիտարկման հարցում: Նրանք կարող են հաղորդել ոչ միայն առարկայական-տրամաբանական, այլև սուբյեկտիվորեն ընդհանրացված և սուբյեկտիվ համոզմունքներից ածանցված հուզական տեղեկատվություն: Հաղորդված տեղեկատվությունը կարող է սահմանավորվել միկրոտեքստի շրջանակներում, ինչը կոմպոզիցիոն մակարդակում համապատասխանում է առավելապես էպիգոդին, այսինքն՝ տեղեկատվությունը կարող է կրել նաև *էպիգոդային* բնույթ:

Միջտեքստայնության էքսպլիցիտային (բացահայտ) ձևը սերտորեն փոխհարաբերակցվում է մեջբերությանը, որը կարող է դրսևորվել աֆորիստական մտքերով, թևավոր խոսքերով, ասացվածքներով, որոնք տեքստում կարող են դրսևորվել իրենց սկզբնաղբյուրային ձևից տարբերվող, ասել է թե՛ թաքնված (cryptic) կամ էլ, հակառակը, ակնհայտորեն (conspicuous)²¹: Նախատեքստը նոր տեքստում կարող է դրսևորվել ամենատարբեր ձևերով՝ բառացի մեջբերումներով կամ էլ ընդհանրապես առանց որևէ հուշումների, այնպես, որ երկու տեքստերի

²⁰ **Литературная энциклопедия терминов и понятий** / под ред. А. Н. Николюкина // Институт науч. информации по общественным наукам РАН. М.: НПК «Интелвак», 2001, с. 870. Այս մասին տե՛ս նաև **Иванчей И. И., Морощкина Н. В.** Взаимодействие имплицитных и эксплицитных знаний при научении искусственным грамматикам. Психологические исследования. 2013, Т. 6, № 32 : 2-20:

²¹ **Meyer H.** The Poetics of Quotation in the European Novel. Prince- town, 1968.

զուգորդական կապ կարելի է նկատել միայն տեքստի խորքային մեկնության ժամանակ, կամ էլ ընթերցողի խորքային ըմբռնումի համատեքստում է, որ, թերևս, հնարավոր է հայտնաբերել երկու տեքստերի թաքնված զուգորդական կապը:

Ե. Ն. Զոլոտուխինան, վերլուծելով եզրույթի առանցքային բովանդակությունը, եզրակացնում է, որ ռեմինիսցենցիան ունի բովանդակային հետևյալ բնորոշումները՝

1. գեղարվեստական պատկերի, ստեղծագործության մասին հիշողություններ կամ հեղինակի կողմից (հաճախ՝ անգիտակցականորեն) գեղարվեստական պատկերի կամ «օտար» ստեղծագործության ինչ-որ տարրերի փոխառություններ,

2. ոճական հնարանքներ, որոնք ներառում են գեղարվեստական գրականության ստեղծագործությունների առանձին տարրերից, պատմական և մշակութային իրադարձություններից, նշանավոր մարդկանց անուններից հիշողություններ, որոնք արդյունքում փոխակերպված կառուցվածքով են դրսևորվում, այնպես, որ տեքստ-սկզբնաղբյուրին «հղում կատարելը» դժվար է դառնում,

3. մի տեքստից մյուսի մեջ ինչ-որ հատվածի բառացիորեն կամ բառացիին մոտ վերարտադրում,

4. «ինքնաբերական» ակնարկ՝ ամբողջապես կախյալ միայն հիշողությունից²²:

Առավել ընդհանրական ձևակերպմամբ կարող եք ասել՝ «ռեմինիսցենցիան տեքստային շրջասություն է, տեքստային ապրիկացիա և տեքստային ակնարկ՝ որպես զուգորդական հղում սահմանված հենակետային տեքստին»²³:

Որպես տեքստակազմիչ «միավորներ» առանձնացնում են «իշխողական» (դոմինանտ) և «տեղայնական (հատվածային) ակնարկներ» հասկացությունները: Իշխողական ակնարկները թեմատիկորեն նշանակալի ակնարկներն են²⁴, որոնք գեղարվեստական տեքստում, չնայած իրենց ամփոփ, սեղմ ծավալին, տարածվում են ողջ տեքստային կառույցում՝ իմաստային հենքի կարևորագույն մասը կազմելով: Դրան հակառակ՝

²² **Золотухина Е. Н.** Интертекстуальность в современном русском языке // Наш язык. 2 008. №5, с. 44-46.

²³ **Москвин В. П.** Выразительные средства современной русской речи: тропы и фигуры. Терминологический словарь-справочник. М.: Едиториал УРСС, 2 004, с. 173:

²⁴ Տե՛ս **Мамаева А. Г.** Лингвистическая природа и стилистические функции аллюзии (на материале английского языка): Автореф. дис. канд. филол. наук. М.-1977, էջ 16:

հատվածային (ֆրագմենտային) նշանակություն ունեցող ակնարկները կոչված չեն շաղկապելու տեքստի իմաստային հանգույցները, ապահովելու տեքստի բովանդակային ամբողջականությունը: Նրանց գործառույթը տեքստային կոնկրետ հատվածում ասելիք-բովանդակություն ձևավորել-զարգացնելն է²⁵:

Սիմուլյակրային ակնարկներն ու միջնեքստայնության տեսությունը

Առանձնակի ուշադրության են արժանի այն ակնարկները, որոնց հիմքում ընկած է հայելիավորման-պատճենման սկզբունքը՝ սիմուլյակրը (լատ. simulacrum-«նմանակ», «պատճեն»), որը «մտացածին նմանություն է, ինչ-որ բանի պայմանական նշան՝ դրսևորված որպես փոխարինիչ», «կեղծ նմանություն, ինչ-որ բանի պայմանական նշան, որը գործում է հասարակության մեջ որպես դրա փոխարինող»²⁶: Ակնարկի այդ տեսակն ընդունված է անվանել սիմուլյակրային ակնարկ, որի հիմքում մտացածին նախադեպային ֆենոմենն է: Այդորինակ ակնարկները հատուկ են գիտաֆանտաստիկ տեքստերին²⁷: Այսպիսով, սիմուլյակրը գոյություն չունեցող «իրականության» պատկերումն է: Այդ ֆենոմենի խորքային արմատները տարածվում են անտիկ փիլիսոփայությունից, առավել կոնկրետ՝ Պլատոնի նյութական աշխարհի երկբնույթ (իրերի և զգայորեն ընկալվող առարկաների աշխարհ²⁸) լինելու մասին տեսական պատկերացումներից: Պլատոնի ենթադրության համաձայն՝ օբյեկտիվ իրականության մեջ ընկալվող յուրաքանչյուր երևույթ իդեալական նախօրինակ-ինքնօրինակի՝ էյդոսների կրկնօրինակներն են՝ էյկոնները: Լայն իմաստով՝ նյութական իրերի աշխարհը, ոչ այլ ինչ է, քան «պատճենների պատճեն», ստվերային պատկերներ, մտաստեղծություն (phantasma)²⁹: Պլատոնյան սկզբնաղբյուրներում «phantasma» ձևակերպման լատինական թարգմանությունը ստացվում է «simulacrum»՝ սիմուլյակր: Այս սկզբնահիմքերից է եզրույթը ծագում ու հետագա զարգացում-ընդլայնումներն ունենում:

Չնայած ակնարկներն ու մեջբերությունները միջտեքստայնության ձևավորման առաջնային հիմնականվիչ արժեք ունեցող պոտենցիալ են,

²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 24:

²⁶ **Бодрийяр Ж.** Система вещей. М.: Изд. «РУДОМИНО», 2 001, с. 5.

²⁷ **Лунькова Л. Н.** Текст. Интеллектуальное дежа-вю: 2 -е изд., испр.М.: Изд. ФЛИНТА: Наука, 2 017, с. 81, 82 .

²⁸ Առավել մանրամասն տե՛ս **Платон**. Кратил // Собрание сочинений в 4-х томах. Т. 1. М.: Изд. Мысль, 1990, էջ 632 –681:

²⁹ **Платон** Софист // Собрание сочинений в 4-х томах. Т. 2 . М.: Мысль, 1993, с. 2 75–345.

բայց միջտեքստայնության ձևավորման խնդրում կարելի է ասել, գործառության միակ կատեգորիան չեն: Միջտեքստայնությունը՝ որպես տեքստի առանցքային հիմք, տարածվում է տեքստի տարաբնույթ շերտերում ու աստիճաններում, այն է՝ բառային, իմաստային, թեմատիկ, մոտիվային, պոմեմտային, ժանրային³⁰, կոմպոզիցիոն կառույցներում, անգամ՝ ռիթմային ու շարահյուսական մակարդակներում: Շարահյուսական - կոմպոզիցիոն մակարդակներում միջտեքստայնությունը կարող է դրսևորվել տարածաժամանակային սահմանները հաղթահարած պոմեմներով, ինչպիսիք են օրինակ, բիբլիական պոմեմները, լեգենդների, հեքիաթների պոմեմները: Շարահյուսական մակարդակում միջտեքստայնությունը դրսևորվում է պրետեքստի շարահյուսական կառուցվածքների կրկնություններում՝ ապահովելով տեքստի յուրահատուկ ռիթմական պատկերը: Իսկ իմաստային մակարդակում այն դրսևորվում է տեքստի իմաստային առանցքը ձևավորող միևնույն մտքի կրկնություններում:

*....սպասման տարիների և Ահեղ Դատաստանի
սահմանի առաջ
ցույց տուր քո դեմքը*

*մեզ որ դեմք չունենք
ավաղ չունենք անուն ու ճակատագիր երբ
սկիզբն անորոշ է վերջը որոշակի
Հայր մեր որ երկինս ես
Հայր մեր որ երկիրս ես
(«Հայր մեր»)³¹*

Միջտեքստային տարրի իմաստային կրկնությունների հիմնական դերը կոչված է ապահովելու տեքստի իմաստաբանական ավարտուն ամբողջականությունը: Տեքստում միջտեքստայնության դրսևորման այդ բազմաշերտ միջոցները շատ դեպքերում անփոփոխ ձևով են ներթափանցում ստեղծագործության հյուսվածքի մեջ: Այս պարագայում նկատելի է ևս մի յուրահատկություն. հեղինակը սեփական տեքստային տարածություն մեջբերելով միջատեքստը՝ «տեղափոխում» է նաև «մայր տեքստի» ռիթմական-շարահյուսական կառուցվածքը:

³⁰ Տե՛ս **Константинова К. О.** Интертекстуальность в аспекте жанрообразования (на материале жанра фэнтези). Автореферат дисс. на соискание ученой степени к. филол. н.. Иркутск-2 011:

³¹ **Էդյան Հ.**, Լույսը ձախ կողմից: Եր., «Զանգակ» հրատ, 2 018, էջ 15:

Այսպիսով, ակնարկները, մեջբերություններն ու ռեմինիսցենցիաները, որոնք՝ որպես գեղարվեստական հնարանքներ, ընդգրկում են ամենատարբեր իմաստաբանական տարածություններ, միջտեքստայնության դրսևորման խնդրում կարևորագույն գործառույթ են իրականացնում: Ակնարկների ու մեջբերությունների իմաստաբանական ու ռճական ներազդեցությամբ կառուցված գեղարվեստական տեքստային տարածության մեջ վերջիններս դառնում են գեղարվեստական ողջ կառույցի իմաստային ու կառուցվածքային կարևորագույն տարրերը: Նրանք թույլ են տալիս ստեղծագործողին արդիականացնել տեքստում առկա բազմապլան միջտեքստային կապերը: Այս հոդվածում փորձ է արվել դիտարկելու ակնարկ, մեջբերություն և ռեմինիսցենցիա հասկացությունները, վերջիններիս տեսակներն ու գործառույթները գեղարվեստական տեքստում:

Եզրակացություն

Հոդվածում դիտարկվում են միջտեքստայնության տեսության ձևավորման խնդիրները: Դիտարկվում են միջտեքստայնության էական ձևակերպությունները՝ համակարգող այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են ռեմինիսցենցիան, ակնարկը, մեջբերությունը, ապլիկացիան, երկրորդական ու պրեցեդենտ տեքստերը: Հոդվածի հետազոտության առարկան արդի հայ պոեզիայում միջտեքստային կապերի բնութագրումն է՝ Հենրիկ Էդոյանի պոեզիայի օրինակով:

Երկու կամ ավելի տեքստեր բովանդակային մակարդակում կարող են միջտեքստային, երկխոսական կապ ձևավորել՝ յուրօրինակ իմաստով ու նոր բովանդակությամբ օժտելով նոր ստեղծված տեքստը: Միջտեքստային կապերը, ձևավորելով տեքստ տեքստի մեջ հյուսվածքը, իրենց մեջ ներառում են նաև մեջբերություններ ու ակնարկներ, որոնք գեղարվեստական տեքստում տարբեր վերագրումներով ու փոխակերպումներով, դառնում են կառուցվածքային որոշիչ տարրեր՝ այս կերպ տեքստը դարձնելով որակապես միմյանցից հեռու տրամադրություններն իրար շաղկապող «դաշտ»: Արդի գրականության մեջ նկատվում է նաև թաքնված մեջբերումների գործածման նորովի դրսևորումներ, որոնք ընդունված է անվանել ռեմինիսցենցիաներ: Հոդվածում վերլուծվում են նաև «ռեմինիսցենցիա» հասկացության տեսական ըմբռնման սահմանման առանձին մոտեցումները:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել և ի հայտ բերել բանաստեղծական սյուժեների ձևավորման խնդրում մեջբերությունների, ակնարկների ու ռեմինիսցենցիաների դերն ու դրանց յուրահատկությունները:

Հետազոտության մեթոդաբանության հիմք են ժ. Ժանետի, Վ. Մոսկվինի և այլոց կողմից առաջադրված տեսական հայեցակարգերը:

Рипсима Закарян

**Аллюзии, цитаты и реминисценции как элементы интертекстуальности
(на примере поэзии Генрика Эдоьяна)**

Резюме

В статье рассматриваются проблемы формирования *теории интертекстуальности*, принимая во *внимание проблеме* систематизации основных интертекстуальных форм. Рассматриваются такие понятия, как реминисценция, аллюзия, цитата, аппликация, вторичный текст и прецедентный текст. Предметом анализа в статье является характеристика интертекстуальных связей в современной армянской поэзии на примере поэзии Генрика Эдоьяна.

На содержательном уровне двух и более текстов могут быть сформированы межтекстовые (интертекстуальные), диалогические связи, которые придают оригинальность и новизну содержанию новосозданного текста. Интертекстуальные связи, формируя текст в тексте, включают в себя цитаты и аллюзии, которые в художественном тексте с различными подзаголовками и преобразованиями становятся определяющими структурными элементами, делая таким образом текст одним «полем» для качественно далеких по настроению элементов. В современной литературе заметны также новые формы использования скрытых цитат, которые принято называть реминисценциями. *Также в статье* анализируются отдельные подходы к определению теоретического осмысления понятия «реминисценция».

Цель статьи - исследовать и раскрыть роль и особенности цитат, аллюзий и реминисценций в образовании стихотворных сюжетов.

Методологической основой исследования является теоретические концепции, предложенные в трудах Ж. Жанетта, В. Москвина и др..

Hripsime Zakaryan

**Allusions, quotations and reminiscences as elements of intertextuality
(by the example of Henrik Edoyan's poetry)**

Summary

The article deals with the problems of formation of the theory of intertextuality, taking into account the problem of systematization of the main intertextual forms. Such concepts as reminiscence, allusion, quotation, application, secondary text, precedent text are considered. The subject of the analysis in the article is the characterization of intertextual connections in modern Armenian poetry on the example of the poetry of Henrik Edoyan.

Two or more texts at the content level can form an intertextual, dialogic connection endowing the newly created text with a unique meaning and new content. Intertext links, shaping text-in-text texture also include citations and hints, which with various attributions and transformations in the fictional text become structural decisive elements thus making the text a "field" qualitatively interconnected "field" of moods qualitatively far from each other. In modern literature there are also new manifestations of the use of hidden citations which are commonly referred to as reminiscences. The article also analyzes individual approaches to the definition of theoretical understanding of the concept of "reminiscence".

The purpose of the article is to explore and identify the role and features of quotations, allusions and reminiscences in the formation of poetic plots.

The methodological basis of the study is the theoretical concepts proposed in the works of J. Jeanette, V. Moskvina and others.

Խմբագրություն է ուղարկվել 15. 03. 2020թ.

Հանձնարարվել է գրախոսության 31. 03. 2020թ.

Տպագրության է հանձնարարվել 16. 09. 2022թ.